ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

## 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

## DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
## Challenges and Opportunities of 21st Century

## РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
## вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

*Հրատարակվում է*
*ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

***Խմբագրական խորհուրդ՝***

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
**ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և**
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

*Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,*

*շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:*

*Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:*

*Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:*

*Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:*

*Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:*

*Շնորհակալ եմ ուշադրության համար:*

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր*

*imperative requirement of the situation shaped in financial-banking system is the assessment of activities efficiency and profitability coefficients of separate banks as well as the banking system itself, particularly qualitative analysis and disclosed trends real assessment.*

**ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**
*«Ֆինանսական ներգրավվածություն» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ*

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Հիմնաբառեր.* *ֆինանսական ներգրավվածություն, ֆինանսական գրագիտություն, ֆինանսական կրթություն, ֆինանսական կայունություն, ֆինանսական միջնորդություն, տնտեսական աճ*

*Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո «ֆինանսական ներգրավվածություն» և «ֆինանսական գրագիտություն» հասկացությունները լայն կիրառություն են ստացել: Միջազգային ֆինանսական կազմակերպություններն իրականացրել են հետազոտություններ: Ընդունվել է «ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը»: Ֆինանսական կրթումը կարևորագույն գործոն է ֆինանսական բարեկեցության բարելավման, ֆինանսական միջնորդության ավելացման և ֆինանսական կայունության ապահովման համար: Իսկ ֆինանսական կրթումը գործընթաց է, որի արդյունքում անձը դառնում է ֆինանսապես գրագետ: Երբ ֆինանսական կրթման արդյունքում անձը դառնում է ֆինանսապես գրագետ, ապա իրապես ֆինանսապես գրագետ անձը միաժամանակ ֆինանսապես ներգրավված անձն է:*

«Ֆինանսական ներգրավվածություն» և «ֆինանսական գրագիտություն» հասկացությունները լայն կիրառություն են ստացել վերջին շրջանում, իսկ 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակաշրջանում դրանք դիտարկվում են որպես ոչ միայն ֆինանսական համակարգերի կայունության ապահովման միջոցներ, այլև տնտեսական աճի հիմք:

«Ֆինանսական ներգրավվածությունը լայն ճանաչում է ստացել որպես աղքատության կրճատման և համընդհանուր տնտեսական աճ ապահովելու միջոց: Ֆինանսական ներգրավվածությունն ինքնանպատակ չէ, այլ նպատակին հասնելու միջոց է, և աճում են ապացույցները, որ այն բերում է էական օգուտներ առանձին անձանց համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ մարդիկ մասնակից են ֆինանսական համակար-

գին, նրանք ավելի հաջող են սկսում և ընդլայնում իրենց գործը, կառավարում են ռիսկերը և կարողանում են կլանել ֆինանսական ցնցումները»[1]:

Անհրաժեշտ է նկատել, որ միջազգային ֆինանսական կազմակերպությունների, շահագրգիռ այլ մարմինների կողմից իրականացվել են մեծածավալ ու բազմաթիվ հետազոտություններ, կայացվել են երկրների համատեղ որոշումներ, որտեղ ֆինանսական ներգրավվածությանը տրված մեկնաբանություններն իրենց էությամբ, որպես կանոն, կրկնում են մեջբերման բովանդակությունը:

Մինչ ֆինանսական ներգրավվածության ու գրագիտության փոխառնչություններին անդրադառնալը՝ պետք է նկատել, որ տրվել են նաև «ֆինանսական կրթություն» հասկացության սահմանումներ: Մասնավորապես՝ ֆինանսական կրթությունը սահմանվում է որպես գործընթաց, ինչի օգնությամբ սպառողները (ներդրողները) բարելավում են ֆինանսական պրոդուկտների (արդյունքների), հայեցակարգերի և ռիսկերի իրենց իմացությունը տեղեկատվության և/կամ օբյեկտիվ խորհրդատվության միջոցով, զարգացնում են հմտությունները և ինքնավստահությունը ֆինանսական ռիսկերի և հնարավորությունների մասին ավելի իրազեկված լինելու միջոցով և գիտեն՝ ուր դիմել օգնության համար, ինչպես նաև ձեռնարկել այլ արդյունավետ քայլեր իրենց ֆինանսական բարեկեցության բարելավման նպատակով[2]:

Միաժամանակ, կարևորելով ֆինանսական կրթության նշանակությունը, ՀՀ կառավարությունն իր արձանագրային որոշման մեջ նշում է. «Չնայած որ ֆինանսական ծառայությունների հայ սպառողները, ինչպես և այլ երկրների սպառողները, պլանավորում են, խնայում են, պարտք են վերցնում և մարում, բյուջե են կառավարում, սակայն իրենց անձնական ֆինանսների կառավարումը հաճախ արդյունավետ ձևով չեն կատարում, չեն օգտվում շուկայի կողմից տրված բազմազան հնարավորություններից, բացակայում է մշակույթը, և առկա է գիտելիքների, ունակությունների և տեղեկացվածության պակաս»[3]: «ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը» տալիս է նաև առանցքային հասկացությունների սահմանումները: Ֆինանսական կրթումը կարևորագույն գործոն է անձանց ֆինանսական բարեկեցության բարելավման, ֆինանսական միջնորդության ավելացման և ֆինանսական կայունության ապահովման համար: Իսկ ֆինանսական կրթումն այն գործընթացն է, որի շնորհիվ անձը դառնում է ֆինանսապես գրագետ: Որոշման մեջ նշվում է, որ ֆինանսական կրթումը չի ներառում մարքեթինգային միջոցառումները, ձեռնարկատիրությունը[4]:

---

[1] The Global Findex Database 2014 Measuring Financial Inclusion around the World. World Bank Policy Research Working Paper 7255. p.2. http://www.worldbank.org/

[2] Recommendation on Principles and Good Practices for Financial Education and Awareness. July 2005. http://www.oecd-ilibrary.org/

[3] ՀՀ կառավարության 13.11.2014 թ. նիստի «Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն» N 47 արձանագրային որոշում: Հավելված 1: Կ. 2.2, 1:

[4] ՀՀ կառավարության 13.11.2014 թ. նիստի «Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն» N 47 արձանագրային որոշում: Հավելված 1: Կ. կ. 12, 3, 4:

Ֆինանսական կրթության, գրագիտության և, ի վերջո, նաև ֆինանսական ներգրավվածության փոխառնչությունների յուրօրինակ արտահայտություն է հետևյալը. «Վերջին տարիների ֆինանսական ճգնաժամը նույնպես ապացուցել է, թե ինչքան կարևոր է այն հանգամանքը, որ անհատներն ու ընտանիքներն ունենան անհրաժեշտ տեղեկատվություն, գիտելիքներ և հմտություններ ֆինանսապես ճիշտ որոշումներ կայացնելու համար: Անհատների և ընտանիքների ֆինանսական դժվարությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ լոկալ և գլոբալ շուկաների վրա: Ճգնաժամը ցույց է տվել նաև, որ անձանց և ընտանիքների ֆինանսական բարեկեցությունը ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն գործոններից է, և ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը կարող է խոչընդոտել կյանքի կենսամակարդակի բարձրացմանը և բարեկեցության ավելացմանը»[1]: Ծավալուն մեջբերման պատճառը ոչ միայն ֆինանսական գրագիտության և ֆինանսական կրթման տեղն ու նշանակությունն արտահայտելու, որքան այն հանգամանքի արձանագրման մեջ է, որ միջազգային հեղինակավոր կազմակերպությունները ևս ֆինանսական գրագիտության, կրթման ու ներգրավվածության կապակցությամբ արտահայտում են հենց նույն տեսակետները:

Վերջապես, պատկերն ամբողջացնում է հետևյալը. «Ֆինանսական ներգրավվածությունը նշանակում է, որ մեծահասակներին հասանելի են, և վերջինները կարող են օգտագործել համապատասխան ֆինանսական ծառայությունների շարքը, այն է՝ ֆինանսական պրոդուկտների հիմնական տեսակները՝ հաշիվներ, խնայողություններ, վարկ և ապահովագրություն: Որպես ելակետ՝ ֆինանսական ներգրավվածությունը սկսվում է բանկում կամ այլ ֆինանսական հաստատությունում ավանդային (դեպոզիտային) կամ ընթացիկ փոխանցումներ կատարելու համար հաշվի առկայությունից կամ բջջային դրամական ծառայություն մատուցողի ծառայություններից օգտվելիս»[2]: Հասկացությունների միջև առնչությունները ներկայացվել են գծապատկեր 1-ում:

Ավելի քան ակնհայտ է, որ ֆինանսական կրթությունն ազդում է ֆինանսական գրագիտության վրա, իսկ վերջինը ձևավորում է ֆինանսական ներգրավվածության որոշակի մակարդակ: Նախադրույթը, ինչի համաձայն ֆինանսական կրթումը գործընթաց է, արդյունքում անձը դառնում է ֆինանսապես գրագետ, թույլ է տալիս պնդել հետևյալը. իրապես ֆինանսապես գրագետ անձը միաժամանակ ֆինանսապես ներգրավված անձ է, և այդ ներգրավվածության ելակետային ուղղություններն են պաշտոնական ֆինանսական հաստատություններում հաշիվ ունենալը և, առաջին հերթին, հենց այդ հաշվի միջոցով մատուցվող ֆինանսական ծառայությունների շարքից օգտվելը:

Հաշվի չօգտագործված մնացորդը, լինելով տվյալ անձի խնայողությունը, հենց նույն պահին դառնում է միջնորդ ֆինանսական հաստատության համար ներգրավված ցպահանջ միջոց և գործունեության շրջանակների ընդլայնման պայման: Վերջինն էլ երկրի ֆինանսական համակարգի կայունության ամրապնդման ուղին է:

---

[1] Նույն տեղում: Կ. 2.1, 20:

[2] What do we know about the link between financial inclusion and inclusive growth? Asli Demirgus-Kunt, Leora Klepper, Dorothe Singer. http://blogs.worldbank.org/allaboutfinance/what-do-we-know-about-link-between-financial-inclusion-and-inclusive-growth




*Գծապատկեր 1.* ***Ֆինանսական կրթության, գրագիտության և ֆինանսական ներգրավվածության միջև կապերը***

Ֆինանսական գրագիտության և ֆինանսական ներգրավվածության միջև տարբերությունը, ըստ ամենայնի, վերաբերում է դրանց տարածման շրջանակին: Տվյալ պարագայում անհրաժեշտ է դուրս գալ ֆինանսական գրագիտության և ներգրավվածության չափելիության դաշտից: Ինչպես ֆինանսական գրագիտությունը, այնպես էլ ներգրավվածությունը կորցնում են բովանդակությունը, եթե փորձ չի արվում որոշակի պահի դրությամբ չափել դրանց աստիճանը: Խնդրի գործնական բնույթն արտահայտվում է հենց չափելիության ապահովման մեջ: Սակայն, տվյալ դեպքում խոսքը ֆինանսական գրագիտությունը կամ ներգրավվածությունը չափելու մասին չէ: Դա ինքնուրույն ու նկատելի աշխատատար ուղղություն է:

Այսպիսով՝ և՛ ֆինանսական կրթությունը, և՛ գրագիտությունը և՛ ֆինանսական ներգրավվածությունը բնութագրվում են շարունակականությամբ, և արձանագրված մակարդակները նախանշում են նոր՝ ավելի բարձր թիրախի ձեռքբերման նպատակ:

**СЕРГЕЙ СУКИАСЯН**

## ВОКРУГ ВОПРОСА ОБ ИДЕНТИЧНОСТИ ФИНАНСОВОЙ ВОВЛЕЧЕННОСТИ И ФИНАНСОВОЙ ГРАМОТНОСТИ

***Ключевые слова:*** *финансовая вовлеченность, финансовая грамотность, финансовое образование, финансовая стабильность, финансовое посредничество, экономический рост*

*После финансово-экономического кризиса широкое применение получили понятия “финансовой вовлеченности” и “финансового образования”. Международные финансовые организации проводили иссследования в этой области. Принята “Национальная стратегия финансового*

*образования РА". Финансовое образование важный фактор для повышения финансового благосостояния, увеличения уровня финансового посредничества и обеспечения финансовой стабильности. А финансовое образование это процесс, в результате которого лицо становится финансово грамотным. Когда в результате финансового образования лицо становится финансово грамотным, то реально финансово грамотное лицо в то же время становится финансово вовлеченным лицом.*

**SERGEY SUQIASYAN**

## ABOUT THE ISSUE OF FINANCIAL INCLUSION AND FINANCIAL LITERACY IDENTITY

***Key words:*** *financial inclusion, financial literacy, financial education, financial sustainability, financial intermediation, economic growth*

*After the financial and economic crisis, "financial inclusion" and "financial literacy" have been widely used. International financial organizations have carried out research. "The National Financial Education Strategy of Armenia" has been adopted. Financial education is a decisive factor in improving financial well-being, strengthening financial intermediation and ensuring financial sustainability. Financial education is a process that leads to the fact that a person becomes financially literate. When a person becomes financially literate as a result of financial education, then in fact financially literate person is financially involved at the same time.*